

Թիվ ջնջելու խաղը

Թիվ ջնջելու խաղը խաղում են համակարգչով: Համակարգիչը գեներացնում է ոչ բացասական ամբողջ թվերի հաջորդականություն, ընդ որում թվերի քանակը գույգ է:

Խաղացողը սկսում է ջնջել այդ թվերը: Ամեն անգամ թույլատրվում է ջնջել հաջորդականության առաջին կամ վերջին թիվը, որից հետո անմիջապես համակարգիչը ջնջում է ստացված հաջորդականության առաջին և վերջին թվերից մեծը: Եթե նրանք հավասար են, ջնջվում է առաջինը:

Պահանջվում է գրել ծրագիր պարզելու համար, թե տրված հաջորդականության համար առավելագույնը որքան է կարող լինել խաղացողի ջնջած թվերի գումարը:

Մուտքը

Նախ տրված է մի n ($0 < n \leq 1000$) գույգ թիվ, որին հաջորդում են n հատ ոչ բացասական ամբողջ թվեր: Հաջորդականության թվերի գումարը չի գերազանցում 1000000-ը:

Ելքը

Պետք է արտածել մի թիվ - խաղացողի ջնջած թվերի մաքսիմալ գումարը:

Օրինակ

Մուտքը.
4 3 2 10 4

Ելքը:
13